Դա վերաբերում է յատկապէս միջնակարգ վարժարաններին. Թիֆլիսում եւ Բաքուում կան մի շարք ռուսական այս տիպի դպրոցներ, որոնց աշակերտների մի զգալի մասը ոչ ռուսներ են, շատերը՝ հայեր: Զարմանալու համար արդէն այդ քաղաքների բարձրագոյն վարժարանների մասին, որոնցից եւ ոչ մէկը հայկական չէ, եւ ուր, ասել է, հայ ուսանողութիւնը օտար լեզուով է ստանում իր կրթութիւնը: Բացառութիւն չեն կազմում Թիֆլիսը եւ Բաքուն: Եւ որովհետեւ թէ՛ Վրաստանում եւ թէ՛ Ատրբէջանում յատկապէս հայ տարրն է խոշոր թիւ կազմում որպէս փոքրամասնութիւն, այդ պատճառով էլ այդ երկիրների ոչ-հայ դպրոցների միջոցով կատարուող օտարացումը զգալի է մանաւանդ հայութեան համար:

Թողնենք առհասարակ մշակութային ինքնավարութիւնը մի կողմը. ո՛ւր մնաց թէկուզ դպրոցական ինքնավարութիւնը հայ փոքրամասնութեանց համար Վրաստանում եւ Ատրբէջանում: Այն մի շարք դպրոցներո՞ւմ, որ կան այնտեղ: Բայց չէ՞ որ ցարիզմի օրով անգամ՝ հայութիւնը ունէր այնտեղ, ինչպէս առհասարակ ողջ Անդրկովկասում, իր ազգային դպրոցները, տարրական թէ միջնակարգ: Եւ մի՞թէ այսչափ զոհերից ու արհաւիրքներից յետոյ էլ համայանավար կարգերի ստեղծած դրութիւնը ցարականի հետ պիտի բաղդատութեան մէջ դրուի, իր առաւելութիւնները նրա հանդէպ չեշտուի շարունակ:

Յետոյ, մեզ կարող են ասել, թէ Վրաստանի եւ Ատրբէջանի մէջ առաջ հայերը սեփական միջոցներով էին դպրոցներ պահում, իսկ այժմ՝ պետական-Վրաստանի եւ Ատրբէջանի հաշուին: Ճիշդ է: Բայց չէ՞ որ, միւս կողմից, նոյն այդ Վրաստանը եւ Ատրբէջանը «ազգայնացրել» են, այսինքն՝ բռնագրաւել են ոչ միայն իրենց սահմաններում եղած հայկական դպրոցների շէնքերը, այլ եւ՝ նրանց նիւթական ապրիւրները: Չէ՞ որ Ներսիսեան, Յովնանեան եւ շատ ուրիշ միջնակարգ դպրոցներ ունէին իրենց հասութաբեր կալուածները, որոնց եկամուտներով էլ պահում էին,— եկամուտներ, որոնք այսօր Վրաստանի եւ Ատրբէջանի գանձարաններն են մտնում:

Նոյնը վերաբերում է նաեւ, աւելի կամ պակաս չափերով, մեր նախկին ժողովրդական-ծխական դպրոցների կայքերին: Հապա մեր ազգային-հանրային ընկերութեանց դոյքե՞ը: Հապա հայ անհատների թողած անբաւ հարստութիւնն՞ը, հայ եկեղեցական-ազգային ընդարձակ հողերը եւ անտառները Ատրբէջանում եւ Վրաստանո՞ւմ:

Այնպէս որ, վերջին հաշուով, այդ երկիրների հայկական դպրոցները ոչ թէ Վրաստանեան կամ Ատրբէջանեան, այլ հայկական հասոյթներով են պահւում այսօր: Իսկ դրա դիմաց կարելի՞ է ասել, թէ Հայաստանի ազգային փոքրամասնութեանց բազմաթիւ դպրոցներից թէկուզ մէկ հատիկը պահւում է՝ նախապէս նրանց պատկանող կալուածների հասոյթով:

Եւ յետոյ, մշակութային ինքնավարութեան մասին է մեր խօսքը, եւ ոչ թէ սոսկ դպրոցական, որ առաջինի մէկ մասն է միայն: Թէ չէ՝ դպրոցական ինքնավարութիւն, թէեւ խաթարուած ձեւով — մի՞թէ շատ աւելի լաւ է ներկայի պատկերը — հայակեր ցարիզմի օրով իսկ ունէինք մենք: Պատմական ճշմարտութիւնը ծածկել չի կարելի, փաստ է այդ: Եւ այդ ինքնավարութեան շնորհիւ էր, որ հայ դպրոցները տարուէ տարի աւելանում էին, որ նրանց պահպանութեան համար հայ ժողովուրդը տարուէ տարի նիւթական մեծ զոհողութիւններ էր անում:

Դաւիթ Անանունը իր «Ռուսահայերի հասարակական զարգացումը» աշխատութեան Գ. հատորի մէջ — որ, ի դէպ, իր արժէքով շատ յետ է մնում առաջիններից — թուական պատկերն է տալիս Կովկասահայութեան դպրոցական-մշակութային կեանքի նախապատերազմեան տասնամեակում, որ շատ հետաքրքրական է: Հայ ժողովուրդը իր սեփական միջոցներով 1914 թուականին պահելիս է եղել 433 ժողովրդական-ծխական դպրոցներ, 1169 ուսուցիչ-ուսուցչուհիներով եւ 34,845 աշակերտ-աշակերտուհիներով: Այդ դպրոցների համար ծախսուել է, յիշեալ թուականին, 565 հազար ռուբլի: Իսկ միջնակարգ դպրոցների եւ ճեմարանի ծախքերի հետ միասին այդ գումարը (1914) հասել է 980 հազարի:

Ասել է՝ պատերազմի նախօրէին Կովկասի